

9435



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 24 » 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 172 - 24

Նախաձեռնող՝

«Լեյք ինվեստ» ՍՊԸ

ք. Երևան, Քանաքեռ 2 /2/, 59, Քանաքեռ- Զեյթուն

Գործունեությունը՝ Շողակաթ բնակավայրի 13-րդ փողոց 7/1
հասցեում սպորտային հանգստի գոպու
և ռեստորանի կառուցում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 172 - 24

«27» 08 2024թ.

Շողակաթ բնակավայրի 13-րդ փողոց 7/1 հասցեում սպորտային հանգստի գոտու և ռեստորանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«Լեյք Ինվեստ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք Շողակաթ բնակավայր

Ներածական մաս. Գործունեության նպատակը ընկերության կողմից Շողակաթ բնակավայրում սպորտային հանգստի գոտու և ռեստորանի կառուցումն է:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատման համար հիմք են հանդիսացել Ճամբարակի համայնքապետարանի կողմից 2023թ. հոկտեմբերի 16-ին տրված N 52-Ճ նախագծման թույլտվությունը, տարածքի ինժինեռակերպարանական վերաբերյալ գեոլոգիական եզրակացությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, համաձայն որի հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ հողամասի կառուցապատման իրավունք:

Նկարագրական. նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում՝ «Սևան» ազգային պարկի սահմաններում: Տարածքին կից մոտակա կառույցները գտնվում են առնվազն 1.5 մ հեռավորության վրա:

Սևանի ավազանի ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով:

Կառուցապատման ենթակա տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի, վերին պլեյստոցեն դարակարգի լճային նստվածքները՝ ներկայացված ավազներով, կոպիճներով և ճալաքարային գրունտներով:

Ռելիեֆով պայմանավորված տարածքը բնութագրվում է 1908.8 մ.-1909.3 մ. նիշերով:



Նախատեսվող գործունեության տարածքում Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Համաձայն հայտի տեղեկատվության նախատեսվող տարածքը օգտագործվում է որպես հանգստյան գոտի, մեծամասամբ ծառապատ է, Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ չեն հանդիպում, բնության, պատմամշակութային հուշարձաններ չկան:

Գրունտային ջրերի հորիզոններ հայտնաբերվել է լճի ափամերձ հատվածում՝ 1,3-1,5 մետր խորություններում:

Նախատեսվում է ափամերձ հատվածում հանգստի համար անհրաժեշտ միջոցների՝ վրանների, գլամփինգների, վարձույթի տաղավարի, ցնցուղարանների, սպասարկող շինությունների տեղադրում, հյուրանոցի, ընդուրան-շոգեբաղնիքների, ռեստորանի մասնաշենքերի, 7 քոթեջների կառուցում, ինչպես նաև ամբողջ տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում:

Կստեղծվի սպորտային հատված՝ վոլեյբոլի և այլ խաղերի անցկացման համար, խաղահրապարակի և վոլեյբոլի հատվածը Սևանա լճից կգտնվի 34 մետր հառավորության վրա և ընդհանուր մակերեսը կկազմի 368 քմ, իսկ շինությունների միջև կապը ապահովելու համար կիրականացվի տարածքի արահետի բարեկարգում:

Նախատեսվում է՝ միահարկ ադմինիստրատիվ մասնաշենք (ընդունարանը), շոգեբաղնիքի հատվածը միահարկ՝ նկուղային տեխնիկական հարկով տանիքը հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ: Շոգեբաղնիքի մասնաշենքում կլինեն փակ և բաց լողավազաններ: Կոնստրուկտիվ համակարգը՝ պողպատյա շրջանակակապային հիմնակմախքով է:

Հյուրանոցի մասնաշենք կլինի 4 հարկանի՝ մեկ նկուղային և երկու մանսարդային հարկերով: Նկուղային հարկում նախատեսվում է ավտոկայանատեղի և պահեստային տարածքներ, առաջին հարկում՝ հյուրանոցի ադմինիստրատիվ հատվածը և խոհանոցը՝ իր ենթակառուցվածքով, մնացած հարկերում կլինեն 36 հատ հյուրանոցային համարներ: Տանիքի ծածկույթը կլինի ծղոտից, ջրահեռացումը՝ կազմակերպված:

Նախատեսվում է նաև 2 մոդուլային քոթեջներ միանման կոնստրուկտիվ լուծումներով, երկաթբետոնե հիմքերով և պողպատյա հիմնակմախքով, տանիքը՝ բիտումային միջուկով, ոչ կազմակերպված ջրահեռացմամբ, երկաթբետոնե հիմքերով և պողպատյա հիմնակմախքով:

Համաձայն հայտին կից ճարտարապետական մասի Սևանա լճի մեջ նախատեսվող կառույցներն են՝ մոտորանավակների կայանատեղին և ռեստորանի տախտակամածը:

1905.0 բացարձակ նիշից ներքև հիմնական շինություններ չկան, իսկ ոչ հիմնական շինություններն են՝

- միահարկ ռեստորանը, որի ընդհանուր մակերեսը կլինի 2002.12 քմ, որից՝ ավագի լողանքի տուփեր՝ 741.61 քմ, տախտակամած Սևանա լճում՝ 83.97 քմ, թենիսի խաղահրապարակ՝ 200 քմ, ռեստորանի ընդհանուր տարածք՝ 976.54 քմ: Ռեստորանը նախատեսվում է կառուցել ափամերձ հատվածում, որն իր մեջ կներառի սանհանգույցներ, բար, խոհանոց և ընդհանուր սրահ: Ռեստորանի մասնաշենքը կլինի մետաղի և փայտի օգտագործմամբ շինություն, որը հնարավոր կլինի անհրաժեշտության դեպքում ապամոնտաժել, տանիքի ծածկույթը նախատեսվում է ծղոտից:

- լողամիջոցների վարձույթի կետը, 23,8 քմ մակերեսով:

- նավամատույցը, որը իրենից ներկայացնում է փայտյա կոնստրուկցիաներով հավաքված



կառույց, որպես հենարաններ օգտագործվելու են փայտյա ցցերը որոնք խարսխվելու են հողի մեջ:

1905.0 բացարձակ նիշից վերև հիմնական և ոչ հիմնական շինություններն են՝

- հիմնական՝ ընդունարան-շոգեբաղնիքի մասնաշենքը, հյուրանոցը, քոթեջներ: Քոթեջները կլինեն ընդհանուր 7 հատ՝ 2 տեսակի: Առաջին՝ մեծ քոթեջի մակերեսը կկազմի 63.32 քմ և կլինի 3 հատ, երկրորդ քոթեջի մակերեսը՝ 24.84 քմ.՝ 4 հատ: Քոթեջները՝ որպես հիմնական շինություն իրականացվելու են երկաթբետոնից, հիմնակմախքը պողպատից:

- ոչ հիմնական՝ ընդունարան-շոգեբաղնիքի -3.00 նիշում նախատեսված է տեխնիկական սենյակ, որտեղ կլինեն բացօթյա և փակ լողավազանների ինժեներական սարքավորումները, որոնցից են՝ ֆիլտրները, ջրի շրջանառության պոմպերը, լողավազանների ավելցուկային ջրի ջրավազանները և այլն:

- Սանհանգույցը, գլեմփինգները: Գլեմփինգները կլինեն 6 հատ, որոնք նախատեսվում է տեղադրել փայտյա կոնստրուկցիաների վրա, որպես հիմք օգտագործվելու են փայտյա ցցեր, որոնք խարսխվելու են հողի մեջ:

Հիմնական շինությունների համար հիմնական շինարարական նյութերը կլինեն՝ բետոնը, պողպատը, փայտը, ոչ հիմնական շինություններինը՝ փայտը, ծղոտը:

Ավտոկայանատեղին նախատեսվում է 50 մեքենայի համար, որին մոտեցող ճանապարհի և բուն կայանատեղիի համար հիմք է ծառայելու գետտեքստիլ ցանցը:

Կառուցապատման հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները՝

Հողի ընդհանուր մակերես՝ 19156 քմ,

Կառուցապատման մակերես՝ 5270.03 քմ, 27.51% քմ,

Սալվածք, կայանատեղի, ճանապարհ, ավազի ծածկույթ՝ 1120 քմ, 5.8 %;

Կանաչապատ մակերես՝ 12765.9 քմ, 66.69 %, (գոյություն ունեցող):

Ընդհանուր կառույցների նիշերը հետևյալն են՝

- մաքրման կայան-1905.10 մ, (տակի նիշ),

- հյուրանոց-0.00=1912.70 մ,

- ընդունարան-շոգեբաղնիք-0.00=1909.25 մ,

- քոթեջներ- 0.00=1907.90-1909.05 մ,

- գլեմփինգներ-0.00=1908.15-1908.50 մ,

- ռեստորան-0.00= (հիմքերի տեղադրման համար անհրաժեշտ փոսորակի ամենից ցածր նիշը համընկնում է՝ 1899.78 նիշի հետ) 1902.67 մ,

- լողամիջոցների վարձույթի կետ-0.00=1905.25 մ,

- սանհանգույց-0.00=1908.70 մ:

Նախատեսվում են 2 լողավազաններ՝ մեծ լողավազանի ջրային մակերեսը կլինի՝ 120.53 քմ, փոքր լողավազանինը՝ 61.98 քմ: Լողավազաններից ջուրը կհեռացվի կոյուղագծերի միջոցով դեպի մաքրման կայան:

Վրանների տեղադիրքը նախատեսվում է փոփոխական, տեղադրման համար չի նախատեսվում ռելիեֆի փոփոխություն:

Նախատեսվում է նաև կառուցել բեմի համար նախատեսված հարթակ՝ միջոցառումների անցկացման համար: Բեմը նախատեսվում է պատրաստել ուղղանկյունաձև 3,0*4,0 մ չափերով, փայտյա թեթև կոնստրուկցիաներով, որի համար չի նախատեսվում հողի մեջ տեղադրված հիմքեր: Բեմի հենարանները կլինեն փայտյա չորսուններ, որոնք տեղադրվելու են հողի վրա:

Բեմի համար հստակ տեղադիրք նախատեսված չէ, անհրաժեշտության համար տեղադրվելու է պահանջված տեղում:



Լողափին մոտեցող նոր ճանապարհներ չեն նախատեսվում՝ արդեն իսկ գոյություն ունեն գրունտապատ ճանապարհներ:

Լողափից օգտվողների համար տեղադրվելու է բիոզուգարաններ, հանդերձարաններ և ցնցուղարաններ, շարժական աղբամաններ:

Լողափի կահավորման համար օգտագործվող բոլոր նյութերը և կոնստրուկցիաները նախատեսվում են բիոլոգիապես մաքուր նյութերից և ժամանակավոր՝ ենթակա արագ ապամոնտաժման առանց խախտելու լանդշաֆտը:

Տարածքում գտնվող բոլոր ծառատեսակները և թփերը կմնան անվնաս: Գոյություն ունեցող կանաչ տարածքների ոռոգումը նախատեսված է կաթիլային եղանակով:

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս կիավաքվեն և կհեռացվեն ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղաջրերի մաքրման համար նախատեսվում է TVER ապրանքանիշի կենսաբանական մաքրման կայան՝ 60 խմ/օր արտադրողականությամբ: Համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների ապահովում է կեղտաջրերի մաքրում, որոնք համապատասխանում են նորմատիվային պահանջներին և մաքրված ջրերը կարող են օգտագործվել նաև ոռոգման նպատակով: Ոռոգման սեզոնին մաքրված հոսքաջրերը կօգտագործվեն ոռոգման համար, իսկ ավելցուկ ջուրը կկուտակվի տարածքում նախատեսվող տարողություններում և անհրաժեշտության դեպում պայմանագրային հիմունքներով կհեռացվի տարածքից (Սևանա լիճ որևէ արտահոսք չի նախատեսվում): Կենսաբանական մաքրման կայան ուղղվող հոսքաջրերի քանակը կկազմի՝ 38,5 խմ/օր (հաշվարկը իրականացված է լողափի առավելագույն զբաղվածության ցուցանիշներով): Մաքրման կայանի մաքրման ցուցանիշը կկազմի 95%:

Կուտակված չեզոք տիղմը, որը բաղկացած է անօրգանական միացություններից (մասնավորապես նիտրատներ և ածխաթթու գազ) պարբերաբար կհեռացվի (տարին 2 անգամ) համապատասխան մասնագիտական ծառայությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

Խմելու տնտեսական կարիքների համար խմելու որակի ջրի օրեկան պահանջարկը կազմում է 43.7 խմ/օր (առավելագույնը 360 հոգու համար):

Կառուցապատման փուլում կիրականացվեն 11845 խմ ծավալով հողային աշխատանքներ, որի մի մասը՝ 3043 խմ հետագայում կօգտագործվի որպես հետլիցք, իսկ մնացած հողային ավելցուկը կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան մեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով, շինարարության խմելու ջուրը կմատակարարվի տարրաներով՝ ջրի վաճառքով զբաղվող ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով:

Կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը նախատեսվում է խորքային հորից, ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար ընկերությունը սահմանված փաստաթղթերի փաթեթը կներկայացնի շրջակա միջավայրի նախաարություն:

Էլեկտրամատակարարումը 400 Կվա ծախսով կիրականացվի նոր ենթակայանից: Գազամատակարարում չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունը հիմնականում կապված կլինեն՝ շինարարական տեխնիկայի շահագործման հետ, փորման ընթացքում փոշու առաջացումներով և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ դիզելային վառելիքի արտանետումներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակները կլինեն՝



կենցաղային աղբը, ինչը կհավաքվի տեղադրված աղբահավաք կոնտեյներներում: 110 խմ շինարարական աղբ, մնացորդային գրունտ՝ 8800 խմ ծավալով, ինչը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, մաքրման կայանում շահագործման փուլում կառաջանա կեղտաջրերի մաքրումից առաջացող տիղմ՝ տարեկան 0,5 խմ ծավալով, որի մաքրումը և աղբավայր տեղափոխումը կիրականացվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա նախատեսվող աշխատանքներից առաջացող հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, մեղմելու նպատակով նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որնցից են.

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում:
- ջրցանի ծավալների այնպիսի իրականացում, որը չի առաջացնի ավելորդ ջրային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական հոսքաջրերի ուղորդում շինարարական հրապարակին կից պարզարան, մեխանիկական նստեցում, պարզեցված ջրի օգտագործում ջրցանման համար, նստվածքը հեռացում որպես շինաղբ,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում և ծածկում տարածքում հատուկ նախատեսված վայրում,
- նավթանյութերի արտահոսքը նվազեցնելու նպատակով սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում, առաջացած շինարարական թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքի բարեկարգում և այլն:

Հողային աշխատանքների ժամանակ հնարավոր հողի բերրի շերտի առկայության դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններից բացի հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), դեպքում ևս նախատեսվում են ազդեցությունների բացառման և նվազեցման համար մի շարք միջոցառումները:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված կլինի շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կկրի կարճատև և ժամանակավոր բնույթ: Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքներում աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավում, դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործման ապահովում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում:

Նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանը, մեղմացմանը ուղղված մշտադիտարկումները, որոնցից են.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ ամիսը մեկ անգամ



հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումների համար/շին.փուլ/ կհատկացվի 2580000 ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Գեղարաքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով:
Հանգստի գոտու կառուցապատման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն /«Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին/ որոշման պահանջները:
2. Կառուցապատման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել «Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին» N 397-Ն որոշման պահանջները:
3. Գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի N57 որոշման պահանջներով, բացառել՝ Սևանա լճի աղտոտումը, վտանգավոր նյութերի, կեղտաջրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:
4. Նախատեսվող գործունեության շահագործման փուլում խորքային հորից ջրօգտագործում իրականացնելու դեպքում ստանալ համապատասխան ջրօգտագործման թույլտվություն:



5. Շինարարության և շահագործման փուլերում պահպանել գործունեության տարածքում առկա բոլոր ծառատեսակները, կանաչապատման աշխատանքներ իականացնել համաձայն նախագծման թույլտվության:

6. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

7. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:

8. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Լեյք Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բակավայրի 13-րդ փողոց 7/1 հասցեում սպորտային հանգստի գոտու և ռեստորանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան